ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 ապրիլի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

40
(3249)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՒԺԵՂԱՑՎԱԾ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱԿԱՆԱՑՆԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրների փոխանցմամբ՝ Դատական դեպարտամենտում որոշում է կայացվել աղմկահարույց քրեական գործերով, հատկապես սպանությունների վերաբերյալ վարույթներով դատական նիստերն անցկացնել ուժեղացված ծառայության պայմաններում:

Պատճառը համակարգում առկա մտահոգությունն է, որ նման գործերով տուժողների եւ մեղադրյալների միջեւ բախումները դատարաններում կարող են դառնալ ավելի հաճախակի եւ անկանխատեսելի: Մասնավորապես, դատական համակարգում չեն բացառում, որ աղմկահարույց սպանությունների գործերով լարվածությունը կարող է վերածվել բացահայտ բախումների, ինչպես դա տեղի ունեցավ Չարենցավանում: Այդ պատճառով որոշվել է խստացնել ծառայությունը՝ հնարավոր միջադեպերն ու բախումները կանխելու նպատակով:

Հիշեցնենք, որ նախորդ օրը Չարենցավանի դատարանում ՍԴ դատավոր Արտակ Ջեյնալյանի հորեղբոր թոռան՝ Աբովյան քաղաքի կանգառի մոտ տեղի ունեցած սպանության գործով դատական նիստը անցել է ծայրահեղ լարված մթնոլորտում: Ըստ տեղեկությունների՝ նիստի ընթացքում տուժող կողմի ներկայացուցիչների եւ մեղադրյալների միջեւ ծեծկռտուք է սկսվել: Իրավիճակն այնքան է սրվել, որ դատավորը չի կարողացել այն վերահսկել, եւ դատարան են շտապել իրավապահ ուժերը:

ՆԳՆ-ն ավելի ուշ հայտնել էր, որ ծեծկռտուքի դեպքով կա 31 ձերբակալված: Բացի այդ, բախումը կանխելու փորձ կատարած դատական կարգադրիչներից մի քանիսը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց: Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ նրանց կյանքին վտանգ չի սպառնում:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Արթուր Մկրտչյանի՝ 2024 թվականի հայտարարագիրը: Նշենք, որ Արթուր Մկրտչյանը պաշտոնը զբաղեցնում է 2017 թվականի հուլիսի 1-ից: Ըստ հայտարարագրի՝ պաշտոնյան ունի 6 միավոր անշարժ գույք: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ 2024 թվականին նա ձեռք է բերել բնակարան Երեւանում 41,314,395 դրամով: Բացի այդ, ունի եւս մեկ բնակարան Նոր Նորք վարչական շրջանում (ձեռք բերված 2010 թվականին): Նրա եւ ընտանիքի համատեղ սեփականությամբ հաշվառված են նաեւ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքում գտնվող անհատական բնակելի տուն, հողամասեր եւ բազմամյա տնկիներ: Տրանսպորտային միջոցների մասով «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ Մկրտչյանն ունի 2018 թվականի արտադրության KIA մակնիշի ավտոմեքենա, ինչպես նաեւ 1983 թվականի արտադրության VAZ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Մարտի 30-ին հերթական կրակոցներն են տեղի ունեցել Արարատի մարզում: Կրակոցները մեկ տարի առաջ տեղի ունեցած միջադեպի շարունակությունն են: shamshyan.com-ն էլ հայտնել է, որ ահազանգով ժամանել են նաեւ իրավապահները: Վանաշեն գյուղի բնակիչները, ովքեր հրաժարվել էին տեսախցիկի առաջ խոսել, իրենց զայրույթն էին հայտնում մարզի քրեական եւ համայնքային ոստիկանների հասցեին՝ ասելով. «Մարտի 30-ի կրակոցը տեղի չէր ունենա, եթե իրավապահները տեղում լինեին: Եւ դա անցյալ տարվա օգոստոսի 8-ի դեպքի շարունակությունն է: Դեպք, որն իրավապահների կողմից ոչ լիարժեք է բացահայտվել, ու դա դեռ շարունակություն է ունենալու, որովհետեւ միջադեպի հերոսները հովանավորվում են մարզի որոշ պաշտոնյաների կողմից, ու այդ պաշտոնյաները շատ լավ գիտեն, որ ամբողջ գյուղում, ինչո՞ւ միայն գյուղում, նաեւ մարզում իրենց անուններն են շոշափվում: Ո՞վ է տեսել, որ առանձնապես ծանր հանցագործություն տեղի ունենա, ու մարզի իրավապահներն իրականացնեն թերի աշխատանք, եւ դրա արդյունքում տեղի ունենա մեկ այլ հանցագործություն»:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նախաձեռնված քրեական վարույթով պարզվել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համալիր հարկային ստուգումների վարչության գլխավոր հարկային տեսուչի պաշտոնը զբաղեցրած անձը տնտեսվարողների օգտին ապօրինի գործողության եւ անգործության համար ստացել է խոշոր չափերի, ընդհանուր՝ 10.500 ԱՄՆ դոլար եւ 3.000.000 ՀՀ դրամ կաշառք: Մասնավորապես, պարզվել է, որ վերը նշված պաշտոնատար անձը հասարակական կազմակերպությունում իրականացվող հարկային ստուգումը ՀԿ-ի օգտին անցկացնելու եւ առկա խախտումները չարձանագրելու համար կազմակերպության տնօրենից ընդունել է խոշոր չափերով՝ 8.000 ԱՄՆ դոլար կաշառք տալու առաջարկը: Արդյունքում՝ հարկային տեսուչը տնօրենից 2025 թվականի նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին մաս-մաս ստացել է կաշառքի ընդհանուր գումարից 6000 ԱՄՆ դոլարը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԵՍ ՍՏԻՊՎԱԾ ԴԻՄԵՑԻ ՕՐԵՆՔԻՆ»

ArmLur.am-ի տաղավարում զրուցել ենք Հովանավանքում հոգեւոր ծառայություն իրականացնող Տեր Արամ Ասատրյանի հետ:

- Տեր Արամ, շնորհակալություն, որ ընդունեցիք մեր հրավերը: Նախ կուզենայինք հասկանալ՝ ի՞նչ փուլում է գտնվում դատական գործընթացը: Դատարանը որոշել էր պարտավորեցնել Մայր Աթոռին վերականգնել Ձեր եւ Տեր Թադեի հոգեւոր ծառայության պաշտոնները: Ի՞նչ ընթացքի մեջ է այժմ այդ գործընթացը:

- Նախ ուզում եմ ասել, որ ես գալիս եմ մի վանական համալիրից, որն իր ճարտարապետությամբ բացառիկ է: Երբ մտնում ես Հովանավանքի գավիթ, բարավորի վրա պատկերված է տասը կույսերի առակը՝ հինգ իմաստուն եւ հինգ անմիտ: Այդ պատկերը այնտեղ պատահական չէ. այն յուրաքանչյուր ներս մտնողին ստիպում է հարց տալ ինքն իրեն՝ ինքը ո՞ր խմբում է:

Ինչ վերաբերում է դատարանին, անկեղծ ասած, անգամ իմ ամենավատ երազում չէի պատկերացնի, որ ստիպված կլինեմ դիմել մեր երկրի դատարանին: Սակայն ուզում եմ, որ հասարակությունը հասկանա՝ սեփական երկրի դատարանից պետք չէ վախենալ: Եթե եկեղեցու ներսում արդարությունն ու կանոնակարգը գործեին, ես երբեք այդ քայլին չէի գնա:

Ես ամիսներ շարունակ, նույնիսկ մեկ տարուց ավելի, փորձել եմ հարցը լուծել եկեղեցու ներսում՝ հանդիպումներ ունենալով թե՛ թեմի առաջնորդի, թե՛ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Ցավոք, այդ բոլոր փորձերը մնացին անարդյունք, եւ ես ստիպված դիմեցի օրենքին՝ ոչ միայն իմ, այլեւ հավատացյալների իրավունքները պաշտպանելու համար:

- Ձեր պահանջը միայն ծառայությա՞ն վերականգնումն է, թե՞ նաեւ Վեհափառ Հայրապետի հրաժարականն եք պահանջում:

- Իմ գլխավոր նպատակը ծառայությունը շարունակելն է Հայ Առաքելական եկեղեցում: Ես համոզված եմ, որ որեւէ բան քահանային չպետք է հետ պահի Աստծուն ծառայելուց:

Երբ ասում ենք «եկեղեցուն ծառայել», ես դա հասկանում եմ որպես ժողովրդին ծառայել, ոչ թե անհատին: Այսօր ցավով եմ նկատում, որ Ավետարանի խոսքի փոխարեն հաճախ գերակայում են մարդկային հրահանգներն ու անհատի պաշտամունքը:



Բարեկարգումն ինձ համար ամենակարեւորն է: Հարցը միայն իմ պաշտոնը չէ: Հարցն այն է, որ եկեղեցու ներսում ճշմարտությունը չդատապարտվի:

- Ձեր հասցեին նաեւ մեղադրանքներ են հնչում, որ պառակտել եք եկեղեցին: Ինչպե՞ս կարձագանքեք:

- Երբ խոսում ենք խաղաղության մասին, պետք է հասկանալ, որ երբեմն խաղաղության հասնելու համար պետք է պայքարել: Խոսքը ֆիզիկական պատերազմի մասին չէ, այլ հոգեւոր պայքարի:

Ես այս պայքարը արդեն իսկ հաջողված եմ համարում, որովհետեւ հասարակությունը սկսել է բարձրաձայն խոսել եկեղեցու ներսում առկա խնդիրների մասին: Մարդիկ այսօր տեղեկացված են, եւ դա արդեն կարեւոր ձեռքբերում է:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔՊ–Ն ԿԲ ՆԱԽԱԳԱՀ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ապրիլի 6-ին ԱԺ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում նիստ է լինելու:

Մենք տեղեկացանք, որ նիստում մի հարց է լինելու: Իշխանությունները Կենտրոնական բանկի նախագահի թեկնածու պետք է ներկայացնեն:

Իսկ ՔՊ խմբակցությունը որոշել է այդ պաշտոնում կրկին առաջադրել ԿԲ նախագահ Մարտին Գալստյանի թեկնածությունը:

Հարցը ներկայացնելու է ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արուսյակ Մանավազյանը:

Ս. Գ.

ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

«Ինչ վերաբերում է պայմանագրի միակողմանի խզմանը, այդ լծակը ՀՀ-ն ունի, բայց մենք չենք պլանավորում եւ չենք ուզում գնալ այդպիսի ճանապարհով»,- կառավարության այսօրվա նիստից հետո հրավիրած ասուլիսում ասաց Նիկոլ Փաշինյանը՝ անդրադառնալով հարցին, թե հնարավո՞ր է Հայաստանը միակողմանի խզի պայմանագիրը «Հարավկովկասյան երկաթուղիներ»-ի հետ:

Նիկոլ Փաշինյանի խոսքով՝ երկաթուղու հարցով բանակցությունները չեն տապալվել, քննարկումները շարունակվում են:

«Մանրամասն քննարկումներ ենք իրականացրել ՌԴ կատարած այցի ընթացքում, ներկայացրել ենք մեր տեսակետները, լսել ենք ռուսաստանցի գործընկերների դիրքորոշումները եւ տեսակետները: Քննարկումների իմաստը հետեւյալն է՝ մեր խնդիրն ընդամենը ձեւակերպված է մեկ նախադասության մեջ, որ Հայաստանի Հանրապետությունն այս պայմաններում իր մրցակցային պոտենցիալ առավելությունները կորցնում է: Մեր խնդիրն է, որ Հայաստանն իր մրցակցային պոտենցիալն ամբողջությամբ իրացնելու հնարավորություն ստանա: Մենք ոչ միայն Ռուսաստանի հետ կապված խնդիր չունենք, այլեւ ընդհակառակը, բարձր ենք գնահատում մեր բարեկամական հարաբերությունները: Մենք իրար հետ պետք է մտածենք՝ ինչ լուծում ենք գտնում»,- նշեց Փաշինյանը:

Հիշեցնենք, որ ավելի վաղ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր՝ «Լուծումն այն է, որ երկաթուղու կոնցեսիոն կառավարման իրավունքը Ռուսաստանից գնի ՌԴ եւ ՀՀ հետ բարեկամական հարաբերություններ ունեցող մի երկիր»:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԿԱՐՈՂ Է ԵՐԿԱՐԱՁԳԵԼ

«Ռոսատոմը» կարող է երկարաձգել Հայաստանում ատոմակայանի շահագործումը մինչեւ 2036թ., սակայն Երեւանը ընտրում է «եվրոպական վեկտորը՝նախապատվությունը տալով ոչ կոմպետենտ եվրոպացի կապալառուներին: Այս մասին ՏԱՍՍ-ին տված հարցազրույցում հայտարարել է Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը: Նա նշել է, որ ատոմակայանը նախատեսված է շահագործել մինչեւ 2026թ. աշունը, «սակայն ավարտվում են նախապատրաստական աշխատանքները մինչեւ 2031թ. աշունը դրա երկարաձգման համար»: «Դա կարվի: Մեր մասնագետները նաեւ կարծում են, որ հնարավոր կլինի երկարաձգել դրա շահագործումը մինչեւ 2036թ., սակայն պետք է պահպանվեն որոշակի պայմաններ, -նշել է Օվերչուկը եւ հավելել,-ներկայումս, որպես Հայաստանի եվրոպական զարգացման վեկտորի մաս, երկարաձգման պայմանագրային աշխատանքների մեծ մասը շնորհվում է եվրոպացի կապալառուներին, որոնք չունեն սեյսմիկ վտանգավոր տարածքներում աշխատելու փորձ»:

ՍԻՐԻԱՆ ՀԱՅՏՆԵԼ Է

Իրաքից նավթատար նավերի առաջին շարասյունը ժամանել է Սիրիայի Բանիաս նավահանգստային քաղաք, որը գտնվում է Միջերկրական ծովի ափին, ըստ Սիրիայի պետական «Սիրիական նավթային ընկերության»: Իրաքյան նավթի խմբաքանակը հասցվել է Բանիաս՝ տեղական վերամշակման գործարանում վերամշակման եւ «միջազգային շուկաներ հետագա արտահանման» համար, ասվում է ընկերության հայտարարության մեջ: Այն նշում է, որ վերամշակման գործարանի տեխնիկական թիմերը «արդեն սկսել են բեռնաթափման աշխատանքները»: «Սիրիական նավթային ընկերությունը» հավելել է, որ «այս քայլը համալիր մատակարարման ծրագրի մի մասն է, որը պատրաստվում է բեռնատարների վրա վերաբեռնմանը՝ վերջնական նշանակման վայր տեղափոխելու համար»: Իրաքի հարավային շրջանից դեպի Բանիաս ուղղություն ունեցող նավթ տեղափոխող առաջին բեռնատարները ապրիլի 1-ին հատել են Սիրիայի սահմանը՝ Ալ-Թանֆ ցամաքային անցակետով:

ԱՅՑԵԼԵԼ Է ՔԿՀ

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի հանձնարարությամբ ապրիլի 2-ին ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչներն այց են իրականացրել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ՝ Սուրբ Աննա եկեղեցու միջադեպի գործով կալանավորված Դավիթ Մինասյանին տեսակցելու նպատակով:

Այցի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչներն առանձնազրույց են ունեցել ազատությունից զրկված անձի հետ, ինչպես նաեւ ուսումնասիրել նրա վերաբերյալ կազմված փաստաթղթերը:

Բարձրացված հարցերի մի մասը տեղում քննարկվել է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի եւ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի անձնակազմի հետ՝ այդ թվում՝ բժշկական հսկողության պատշաճ կազմակերպումն ապահովելու համար:

Հատուկ ուշադրության կենտրոնում են եղել անձի կրթության իրավունքի ապահովման հետ կապված հարցերը:

ՋԵՐՄ ՇՓՈՒՄ

Գագիկ Ծառուկյանի մարզային այցերը շարունակվում են. «Արարատի մարզում բնակիչների հետ ունեցանք ջերմ ու անմիջական շփում՝ լսելով նրանց հուզող առաջնահերթ խնդիրներն ու առաջարկները:

Յուրաքանչյուր բարձրացված հարց ունի իր լուծումը. երբ մարդը կարողանում է իր աշխատանքի արդյունքով ապրել, նա մնում է իր հողում, ստեղծում ու զարգացնում է իր համայնքը:

Կարեւորը՝ մարդկանց վերադարձնել հավատը սեփական ուժերի նկատմամբ եւ ձեւավորել այնպիսի միջավայր, որտեղ յուրաքանչյուր մարդ իրեն կզգա արժեւորված ու վստահ վաղվա օրվա նկատմամբ»:

ՈՉ ՌԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

ԱՄՆ ռազմական գործողությունները Իրանի միջուկային ծրագրերի օբյեկտների դեմ չեն լուծի առկա խնդիրները. դիվանագիտությունը պետք է ապահովի շարունակական մոնիթորինգի պայմաններ: Այս մասին լրագրողներին հայտարարել է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը՝ Կորեայի Հանրապետություն ժամանելուն պես:

«Եթե չկան միջազգային դիտորդներ՝ առկա նյութերի գտնվելու վայրը ստուգելու, հետազոտությունների անցկացման եղանակը եւ օբյեկտները ստուգելու համար, ապա դա լուրջ չէ, քանի որ Իրանում, այսօր եւ վաղը, միշտ կլինեն անհրաժեշտ հմտություններով մարդիկ, եւ միշտ կլինեն թաքնված օբյեկտներ:

Հետեւաբար, նույնիսկ նպատակային ռազմական գործողությունը, նույնիսկ մի քանի շաբաթվա ընթացքում, վերջնականապես չի լուծի միջուկային խնդիրը», - ասել է նա:

ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԵՆ

Ռուսաստանի նախագահի օգնական Յուրի Ուշակովը հայտարարել է, որ Ուկրաինայի հակամարտության կարգավորման շուրջ եռակողմ բանակցությունները դադարեցվել են: Նրա խոսքով՝ թեեւ կապերը ԱՄՆ-ի հետ պահպանվում են, այս փուլում բանակցային գործընթացը գտնվում է դադարեցված վիճակում:

Ուշակովը նշել է, որ ռուսական կողմը շարունակում է շփումները Վաշինգտոնի հետ՝ հիմնականում քննարկելով ուկրաինական թեմաները: Միեւնույն ժամանակ նա ընդգծել է, որ ամերիկյան կողմը Մոսկվային չի տեղեկացնում Կիեւի հետ իր բանակցությունների մանրամասների մասին, եւ շփումները շարունակվում են սահմանափակ ձեւաչափով:

Ավելի վաղ Ուշակովը նշել էր, որ Ուկրաինայի զինված ուժերի հնարավոր դուրսբերումը Դոնբասից կարող է նպաստել ռազմական գործողությունների դադարեցմանը: Իր հերթին Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին հայտնել էր, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի թիմում նույնպես քննարկվում է այդ տարբերակը, սակայն վերջին բանակցությունները որեւէ արդյունքի չեն հանգեցրել:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԻՆՉ ՈՒՆԻ «ԿՈԿՈՐԴԻԼՈՍԱԳԵՏ» ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ

Վեդի համայնքի ՔՊ-ական ղեկավար Գարիկ Սարգսյանը երեկ Ֆեյսբուքում գրառում էր կատարել օրեր առաջ Սուրբ Աննա եկեղեցում Փաշինյանի եւ դպրոցական տղաների միջեւ տեղի ունեցած միջադեպի արդյունքում եղբայրներից մեկի կալանավորման վերաբերյալ:

«18 տարեկան «երեխան» Վերջին զանգը կնշի Արմավիր ՔԿՀ-ում: Вот какая доля хулиганчика»,- գրել է նա:

Հիշեցնենք, որ 18-ամյա տղան դատավոր Մնացական Մարտիրոսյանի որոշմամբ 2 ամսով կալանավորվել է: Նա «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ մուտք չգործած՝ գիտակցությունը կորցրել էր, տեղափոխվել հիվանդանոց, ապա կրկին տեղափոխվել նույն քրեակատարողական հիմնարկ:

Հատկանշական է, որ Գարիկ Սարգսյանը նախկինում եւս հայտնվել է հանրային քննարկումների կենտրոնում:

ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում, խոսելով մարզում կոկորդիլոսաբուծարանի ստեղծման մասին, Գ.Սարգսյանը նշեց, որ կոկորդիլոսի ձվերի ներմուծման ժամանակ մաքսային խնդիրը հարթվել է, ձվերը ներմուծվել են թռչնի ձվի կոդի տակ:

Ըստ նրա՝ ինքն իր ֆեյսբուքյան գրառումներում քննարկել է կոկորդիլոսների նախնիների պատկանելությունը, թե կենդանիների որ խմբին են դրանք ավելի շատ պատկանում. «Ես ավելի շատ կենսաբանի ու կենդանիների ուսումնասիրման մասնագետ եմ դարձել: Կոկորդիլոսն իր ամբողջ օրգան համակարգերով մոտ է թռչուններին: Կոկորդիլոսը չունի ստամոքս, ունի քարաճիկ, պատկերացնո՞ւմ եք: Այսինքն՝ ինչ-որ ժամանակ նրանք թռչել են»:

ArmLur.am-ը ուսումնասիրեց Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանի կենսագրությունն ու հայտարարագիրը եւ պարզեց մի շարք ուշագրավ փաստեր:

Գարիկ Սարգսյանը 2015 թվականի մայիսի 30-ից հանդիսանում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հիմնադիր անդամ: Նրա քաղաքական կարիերայի կտրուկ աճը գրանցվել է 2018 թվականից հետո. Նոր Կյանքի համայնքապետի պաշտոնից նա նշանակվել է Արարատի մարզպետ:

2018 թվականի դեկտեմբերի 9-ին ստացել է պատգամավորական մանդատ, սակայն 2019 թվականի հունվարի 4-ին հրաժարվել է դրանից: 2021 թվականի փետրվարի 1-ին նշանակվել է ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ, իսկ արդեն 2022 թվականի հունվարի 5-ին ազատվել է այդ պաշտոնից:

Նույն թվականի ապրիլի 7-ին նշանակվել է Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավար:

Մինչ այդ Վեդու համայնքապետը աշխատանքային պատմություն չունի Հայաստանում, քանի որ շատերի պես 2012-2015 թվականներին եղել է արտագնա աշխատանքում Ռուսաստանի Դաշնությունում, ասել է թե «խոպանում» է եղել:

ArmLur.am-ը ուսումնասիրեց նաեւ նրա՝ 2024 թվականի տարեկան հայտարարագիրը: Ըստ ներկայացված տվյալների՝ Սարգսյանը ունի մի քանի անշարժ գույք:

Տավուշի մարզի Դիլիջանում ձեռք է բերել հասարակական նշանակության երկու շինություն՝ յուրաքանչյուրից 1/4 բաժնեմասով (2023 թվականի հոկտեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին):

Բացի այդ, նա ունի համատեղ սեփականությամբ բնակելի տուն Արարատի մարզի Նոր Կյանք համայնքում (ձեռք բերված 2003 թվականին), ինչպես նաեւ հողամաս Նոր Ուղի համայնքում:

Դրամական միջոցների մասով ArmLur.am-ը պարզեց, որ նրա բանկային հաշիվների մնացորդը կազմել է 687,820 դրամ, իսկ կանխիկ միջոցները՝ 650,000 դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են ընդհանուր 10,622,348 դրամ, որից՝

- 5,622,348 դրամ՝ աշխատավարձ Վեդու համայնքապետարանից,
- 5,000,000 դրամ՝ ստացված վարկ «Ամիո բանկ» Արտաշատի մասնաճյուղից:

Տարվա վերջի դրությամբ նրա վարկային պարտավորությունը կազմել է 5,000,000 դրամ:

Նա շարունակում է ակտիվ քաղաքական գործունեություն ծավալել՝ հանդիսանալով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Վեդու տարածքային խորհրդի նախագահ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՉԻ ԲԱՆԱԿՑՈՒՄ

«Իրանն այսօր». Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին հայտարարել է, որ պատերազմի դադարեցման վերաբերյալ ԱՄՆ 15 կետանոց առաջարկներին Իրանը չի պատասխանել եւ պայմաններ չի ներկայացրել, իսկ հակառակը պնդող լուրերը «ՋԼՄ-ների ենթադրություններն են»:

Միաժամանակ Արաղչին վերահաստատել է այդ նույն լուրերի բովանդակությունն առ այն, որ Իրանը ոչ թե հրադադարի է ձգտում, այլ տարածաշրջանի բոլոր ճակատներում պատերազմի դադարեցման: Նա պնդել է, որ Իրանին պետք է փոխհատուցում տրվի եւ երաշխիքներ, որ պատերազմը չի կրկնվի: «Փորձը ցույց է տվել, որ ոչ միայն մեկ կամ երկու երկրի, այլեւ ՄԱԿ ԱԽ երաշխիքները եւս բավարար չեն: Այս առումով մեր բարեկամները որոշ գաղափարներ են առաջ քաշել, որոնք մենք ուսումնասիրում ենք՝ հասկանալու, թե որ երաշխիքները կարող են արդյունավետ լինել, եթե մի օր պատերազմն ավարտվի Իրանի պայմաններով», -ասել է Արաղչին: Հորմուզի նեղուցի առնչությամբ նախարարը նշել է, որ նեղուցով երթեւեկության եւ այլ հարցերը պետք է կարգավորվեն Իրանի ու Օմանի համատեղ մեխանիզմներով, քանի որ նեղուցը գտնվում է այդ երկու երկրի տարածքային ջրերում: Նա նաեւ ընդգծել է, որ Իրանը նվազագույնը 6 ամիս դիմադրության է պատրաստ, եւ հավաստիացրել, որ ԱՄՆ հետ չեն բանակցում, այլ միայն ուղերձներ են փոխանակում:

ԿԱԴՐԵՐԻ ՊԱԿԱՍ ՈՒՆԻ

Ռուսաստանում 2025 թվականի նոյեմբերին ստեղծված անօդաչու համակարգերի զորատեսակը կադրերի կարիք ունի: Այս մասին հայտարարել է Կրեմլի խոսնակ Դմիտրի Պեսկովը՝ նշելով, որ նոր ձեւավորված այս ուղղությունը պահանջում է համապատասխան մասնագիտական հմտություններ ունեցող զինծառայողներ: Պեսկովի խոսքով՝ զորատեսակում ծառայելու համար անհրաժեշտ է հատուկ պատրաստվածություն, եւ արդեն ներկայացվել են առաջարկներ այն քաղաքացիների համար, ովքեր ունեն համապատասխան գիտելիքներ եւ պատրաստ են միանալ այդ ստորաբաժանումներին: Խոսքը վերաբերում է հատկապես անօդաչու տեխնոլոգիաների ոլորտում կարողություններ ունեցող մասնագետներին:

Ավելի վաղ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հանձնարարել էր ակտիվորեն ներգրավել ռազմական գործողությունների մասնակիցներին անօդաչու տեխնոլոգիաների մշակման, արտադրության եւ շահագործման գործընթացներում: Նա նաեւ կոչ էր արել ստեղծել հետազոտական կենտրոններ եւ փորձարկման հարթակներ՝ դրոնների սերտիֆիկացման համար:

ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

Չինաստանը կոչ է արել նստել բանակցությունների սեղանի շուրջ՝ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հայտարարություններից հետո: «Չինաստանը կրկին կոչ է անում Իրանի դեմ պատերազմին ներգրավված կողմերին անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները եւ հնարավորինս շուտ սկսել խաղաղության բանակցություններ»,-ասվում է Չինաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Մաո Նինգի հայտարարության մեջ: Ավելի վաղ Թրամփը հայտարարել էր, որ ԱՄՆ-ն այնպիսի հզոր հարվածներ կհասցնի, որ «Իրանին կվերադարձնի քարե դար»:

ԻՆՉ ԵՆ ՓՈՐՁԵԼ ՊԱՐՁԵԼ

ՀՈՐԸ ԿԱՆՉԵԼ ԵՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԱԱԾ շենքի ուղղությամբ հրավառ շշեր նետած ու կալանավորված Ռաֆֆի Մանդալյանի հորը կանչել են ՀՀ ֆինչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչություն ու հարցաքննել: Նշենք, որ կալանավորված երիտասարդի մայրը մահացած է:

ArmLur.am-ը արդեն տեղեկացրել էր, որ այս տարվա մարտի 6-ին Երեւան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բնակիչ, 1994 թվականին ծնված Ռաֆֆի Մանդալյանը հրավառ շշեր էր նետել ՀՀ Ազգային անվտանգության ծառայության վարչական շենքի վրա: ArmLur.am-ի՝ իրավապահ մարմիններին մոտ կանգնած աղբյուրները միջադեպի վերաբերյալ նոր, բացառիկ մանրամասներ էին հայտնել՝ բացահայտելով երիտասարդի գործողության շարժառիթները: Մասնավորապես, ըստ ArmLur.am-ի տեղեկությունների՝ քաղաքացի Ռաֆֆի Մանդալյանը իրավապահներին ցուցմունք էր տվել, բացատրել, որ իր քայլը պայմանավորված է եղել խորը զայրույթով եւ հիասթափությամբ: Նա նշել էր, որ իրեն մտահոգում է հայրենիքի անվտանգության վիճակը, եւ, իր համոզմամբ, հասարակության մեջ առկա է անտարբերություն եւ լռություն այդ հարցի շուրջ: Մանդալյանի խոսքով՝ իր գործողությամբ փորձել է ցույց տալ, որ «բոլորը անտարբեր չեն»: Նրա նպատակն էր եղել կոտրել, իր ձեւակերպմամբ, հասարակական լռությունը եւ ուշադրություն հրավիրել այն հարցի վրա, որ քաղաքացիների մի հատվածը մտահոգված է երկրի ապագայով: Ըստ նույն աղբյուրների՝ նա կանխամտածված կերպով գնացել է Ազգային անվտանգության ծառայության շենք ոչ աշխատանքային ժամի՝ փորձելով խուսափել մարդկային վնասներից եւ միաժամանակ ապահովել իր ուղերձի հրապարակայնությունը: Իր բացատրությամբ՝ այդ քայլը կատարել է՝ «ինքնազոհության գնալով», միայն թե իր ասելիքը հասնի հանրությանը. բոլորը չէ, որ անտարբեր են հայրենիքի ճակատագրի նկատմամբ:

Հատկանշական է նաեւ, որ շշերը նետելուց հետո Ռաֆֆի Մանդալյանը չի փորձել փախչել դեպքի վայրից: Նա կանգնել է փողոցում եւ սպասել իրավապահներին: ArmLur.am-ը տեղեկացավ նաեւ, որ կալանավորված Ռաֆֆի Մանդալյանը ներկայումս գտնվում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆՎՏԱՆԳ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅՐԵՆԻՔ

Արցախ Միությունը եւ Մարդու իրավունքների համալսարանական ցանցն իրենց ներդրումն են ունեցել ՄԱԿ-ի զեկույցում, ըստ որի՝ Արցախից տեղահանված կանայք Հայաստանում հայտնվել են «ծայրահեղ խոցելի վիճակում»:

Արցախ Միությունը հանդիպել է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ)՝ Կանանց եւ աղջիկների նկատմամբ խտրականության հարցերով աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ՝ վերջիններիս 2026 թ. մարտին Հայաստան կատարած այցի շրջանակներում: Այս այցի ընթացքում ներկայացրեցինք մեր զեկույցը, որը պատրաստվել է «Մարդու իրավունքների համալսարանական ցանցի» (UNHR) հետ համագործակցությամբ, եւ որում մանրամասն ներկայացված է Արցախից (Լեռնային Ղարաբաղից) բռնի տեղահանված կանանց օրհասական վիճակը: Այցի արդյունքներով կազմված եւ մարտի 25-ին հրապարակված ամփոփիչ հայտարարության մեջ Աշխատանքային խումբն առանձնահատուկ անդրադարձ է կատարում այն կանանց վիճակին, որոնք 2023 թ. սեպտեմբերին Ադրբեջանի ռազմական հարձակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ավելի քան 120,000 արցախցիներից են:

Աշխատանքային խումբը ողջունում է Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղից տեղահանված կանանց ու աղջիկներին ընդունելու եւ նրանց մարդասիրական օգնությամբ ապահովելու հանձնառությունը, սակայն միաժամանակ արձանագրում է, որ նրանք բախվում են տնտեսական խոցելիության, բնակարանային անապահովության, ինչպես նաեւ սոցիալ-տնտեսական մի շարք յուրահատուկ ու խտրական մարտահրավերների: Նրանց այս խոցելի վիճակն ուղղակիորեն բխում է բռնի տեղահանումից, հայրենի հողի, նյութական ունեցվածքի եւ նախկինում համախմբված համայնքների կորստից»,-նշված է աշխատանքային խմբի զեկույցում: Աշխատանքային խմբի եզրահանգումներն ուղղակիորեն հիմնված են մեր համատեղ զեկույցում եւ մարտին ունեցած այցի շրջանակում բարձրաձայնված այն հիմնական խնդիրների վրա, որոնց բախվում են արցախցի կանայք տարածաշրջանի էթնիկ զտումից հետո: Ավելի քան երկու տարի առաջ տեղի ունեցած բռնի տեղահանման հետեւանքով Հայաստանում տասնյակ հազարավոր կանանց առջեւ ծառացած ծայրահեղ տնտեսական եւ բնակարանային անապահովության մեր փաստագրմանը զուգահեռ՝մենք վերհանել ենք նաեւ այս խմբին ուղղված ՀՀ կառավարության ծրագրերի կառուցվածքային թերությունները: Դրանց թվում է բնակարանային ապահովման պետական ծրագիրը, որը լրացուցիչ չափով խոցելի է դարձնում հատկապես փոքր ընտանիքներին, միայնակ մայրերին եւ միայնակ ապրող կանանց, քանի որ հատկացվող աջակցությունը չի բավարարում նույնիսկ մեկ բնակարանի ձեռքբերման նվազագույն շուկայական արժեքը ծածկելու համար: Մենք նաեւ բարձրաձայնել ենք իրավական եւ սոցիալական պաշտպանության համակարգային այն բացթողումների հրատապությունը, որոնք արցախցի կանանց ու խոցելի այլ խմբերի համար ստեղծում են «իրավական վակուում»: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է 2023թ. սեպտեմբերին Ստեփանակերտի վառելիքի պահեստի պայթյունից տուժածների ընտանիքներին պետական աջակցության տրամադրման հարցում առկա խնդիրներին, միայնակ ծնող ունեցող ընտանիքների համար կենսական նշանակության երաշխիքների կորստին, ինչպես նաեւ այն իրավազորային խոչընդոտներին, որոնց բախվում են ամուսնալուծված կանայք՝ ՀՀ դատարաններում ալիմենտի բռնագանձումն ապահովելու հարցում: Ավելին, զեկույցն արձանագրում է տեղահանման թողած հոգեբանական ծանր հետեւանքները, տրավմայի հաղթահարման պետական համակարգված ռազմավարության բացակայությունը եւ շրջափակման ընթացքում կանանց վերարտադրողական առողջությանը հասցված ծանր վնասը: Ի վերջո, մենք շեշտել ենք այն շարունակական հոգեկան տառապանքը, որն առաջացել է հայրենի հողից զրկվելու, մշակութային կենսակերպի խաթարման ու Արցախում մնացած հարազատների շիրիմներին այցելելու ողբերգական անհնարինության հետեւանքով: «Հումանիտար մարտահրավեր լինելուց զատ՝արցախցի կանանց տեղահանությունն արժանապատվության եւ իրավունքների համակարգային ճգնաժամ է: Մենք կոչ ենք անում Հայաստանի կառավարությանն անհապաղ ներդնել բնակարանային համարժեք երաշխիքներ եւ հոգեբանական տրավմաները հաշվի առնող ազգային ռազմավարություն՝ խոցելի կանանց տնտեսական եւ հոգեբանական փլուզումից պաշտպանելու համար: Այս միջոցառումներն էական քայլեր են դեպի մեր վերջնական նպատակը՝անվտանգ ու արժանապատիվ վերադարձ հայրենիք եւ նրանց իրավունքների համապարփակ վերականգնում»,-նշեց Արցախ Միության նախագահ Արտակ Բեգլարյանը: «Մեր փաստագրած տվյալները վկայում են, որ արցախցի կանանց նկատմամբ դրսեւորվող խտրականությունը էթնիկ զտման ուղղակի եւ շարունակական հետեւանքն է: Միջազգային հանրությունը պարտավոր է սոսկ հայտարարություններից անցնել գործողությունների եւ ստեղծել հաշվետվողականության մեխանիզմներ, որոնք թույլ կտան փոխհատուցել հողի ու գույքի կորուստը եւ հասցեագրել կանանց կյանքի բնականոն ընթացքի խաթարումը»,- նշել է «Մարդու իրավունքների համալսարանական ցանցի» իրավական եւ քաղաքական հարցերով տնօրեն, գործնական ուսուցման ավագ ղեկավար Թոմաս Բեքերը: Արցախ Միությունը մնում է հաստատակամ իր առաքելության մեջ՝պաշտպանելու Արցախի բռնի տեղահանված ժողովրդի հավաքական շահերը, իրավունքները եւ արժանապատվությունը: Ի վերջո, մենք ձգտում ենք նպաստել Արցախի ժողովրդի հավաքական վերադարձին իրենց նախնիների հայրենիք՝ինքնորոշված, խաղաղ, արդար, արժանապատիվ եւ անվտանգ կյանքով ապրելու համար:

ԼՈՒՐԵՐ

ԴԱՏԱՐԱՆԻ ԾԵԾԿՌՏՈՒՔԻ ՀԵՏՔԵՐՈՎ

2025 թվականի նոյեմբերի 10-ին Աբովյան քաղաքում սպանություն էր տեղի ունեցել: 2 անձ հարձակվել էին 24-ամյա Սարգիս Ջեյնալյանի վրա, դանակի հարվածներ հասցրել, ինչի հետեւանքով նա սպանվել էր: Սպանված Սարգիս Ջեյնալյանը ՍԴ դատավոր Արտակ Ջեյնալյանի հորեղբոր թոռն էր:

Վերջինիս սպանությունը խորը արմատներ ուներ: Բանն այն է, որ սպանություն կատարողի եւ սպանվածի միջեւ ամիսներ առաջ կոնֆլիկտ էր տեղի ունեցել, որից հետո նրանք հանդիպել էին, ու արդյունքում հանդիպումը ճակատագրական եղավ Սարգիս Ջեյնալյանի համար:

Ապրիլի 1-ին Չարենցավանի դատարանում տեղի է ունեցել այս աղմկահարույց գործով առաջին դատական նիստը, որի ժամանակ դատարանում սպանվածի հարազատների եւ մեղադրյալների միջեւ վեճ է տեղի ունեցել, սկսվել է ծեծկռտուք, վիրավորվել են դատական կարգադրիչներ, իրավապահները շտապել են Չարենցավանի դատարան, շտապօգնություն են կանչել, քանի որ ծեծկռտուքի արդյունքում դատական կարգադրիչներից մեկը ստացել է գլխի շրջանում վնասվածք:

Ոստիկանության ծառայողները կանխել են միջադեպը, 31 անձ խուլիգանության կասկածանքով ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Չարենցավանի բաժին: Այս մասին հայտնել էին ՆԳՆ-ից՝ անդրադառնալով Չարենցավանի դատարանում տեղի ունեցած միջադեպին:

Երեկ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ձերբակալվածների մեջ են ՍԴ դատավոր Արտակ Ջեյնալյանի հորեղբայրը, սպանված Սարգիս Ջեյնալյանի քեռին ու ընկերները: Վերջիններիս դեռ ազատ չեն արձակել:

Ք. Մ.

ԿՎԵՐԱԴԱՐՁՎԻ

Գլխավոր դատախազությունը 2025 թվականի հոկտեմբերի 18-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի եւ ֆիզիկական անձի՝2011 թվականի հոկտեմբերի 7-ին անցկացված աճուրդն անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու պահանջներով:

Հակակոռուպցիոն դատարանը 2026 թվականի մարտի 26-ի վճռով բավարարել է Գլխավոր դատախազության հայցը: Վճռով՝ անվավեր է ճանաչվել 0.12 հա մակերեսով հողամասի վերաբերյալ 2011 թվականի հոկտեմբերի 7-ին անցկացված աճուրդը եւ, որպես անվավերության հետեւանք, ի թիվս այլնի, անվավեր է ճանաչվել նաեւ հողամասի նկատմամբ ֆիզիկական անձի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, Վայոց ձորի մարզի Արենի համայնքին կվերադարձվի 0.12 հա մակերեսով հողամասը:

● *Մարտի 31-ից ապրիլի 1-ը բացահայտվել է 127 հանցագործություն, որից 13 դեպք՝ ֆիզիկական ներգործության:*

ՄԱՐԶ

ԹՂԹԻ ՎՐԱ

Սահմանազատման անվան տակ, ապօրինի, միակողմանի ձեւով 2024թ.-ին Ադրբեջանին հանձնվեց Կիրանց գյուղից շուրջ 15 հեկտար հող, միջպետական ավտոճանապարհի մի հատված եւ այդ ճանապարհի Կիրանցի կամուրջը: Սահմանազատումն արվեց կառավարության գաղտնի որոշմամբ, Ադրբեջանին հանձնված հողի, գույքի դիմաց դրանց սեփականատերերին դրամական փոխհատուցում տրվեց: Հողերի հանձնումից հետո Կիրանցի բնակիչների դժգոհությունը զսպելու համար գյուղում տարբեր ծրագրեր են կատարվել՝ գործարկվել է դպրոցի նոր շենք, գյուղի կենտրոնում գտնվող Սուրբ Երրորդություն եկեղեցին է նորոգվում:

Կիրանցում նախատեսվող ծրագրերից է ագրոզբոսաշրջության ծրագիրը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել. «Հայտնել եք, որ Կիրանց բնակավայրի եւ հարակից տարածքների զարգացման նպատակով Ֆրանսիայի Օ-դը-Սեն դեպարտամենտի հետ համատեղ կազմվել է ագրոզբոսաշրջության ծրագիր եւ ներկայացվել դոնոր կազմակերպության քննարկմանը, ծրագիրը հաստատվել է: Որքա՞ն է այդ ծրագրի արժեքը, ե՞րբ է այն իրականացվելու, ո՞ւմ կողմից, ծրագրով ի՞նչ գործողություններ են արվելու, ի՞նչ արդյունքներ են լինելու»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի եւ Ֆրանսիայի Օ-դը-Սեն դեպարտամենտի միջեւ կնքված 2025-2029թթ. «Ապակենտրոնացված համագործակցության համաձայնագրի» շրջանակում, Ֆրանսիայում Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ 2026թ. հունվարին մեկնարկել է առաջին ծրագիրը՝ «Ագրոզբոսաշրջության ռազմավարության իրականացումը որպես Տավուշի մարզպետի աշխատակազմի եւ Օ-դը-Սեն դեպարտամենտի ապակենտրոնացված համագործակցության բաղադիչ»: Ծրագիրը մշակվել եւ ներկայացվել է ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կողմից, որը կիրականացվի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի հետ համագործակցությամբ: Ծրագրային գործողությունների հիմնական ուղղություններն են՝ ստեղծել Տավուշի մարզի ագրոզբոսաշրջության ցանց, աջակցել ագրոզբոսաշրջային տնտեսություններին մեթոդական, ֆինանսական եւ հաղորդակցության գործիքներով, նպաստել Տավուշի մարզի այցեվայրերի կառավարման կազմակերպության կարողությունների զարգացմանը: Ծրագրի նախնական տարբերակը քննարկվել է դեռեւս 2024թ. մայիսին՝ Օ-դը-Սեն դեպարատամենտի պատվիրակության Տավուշի մարզի կատարած այցի ժամանակ, որի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, կարեւորվել է նաեւ սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացման հնարավորությունները»:

Կիրանցում առայժմ ագրոզբոսաշրջություն չի զարգացել, սակայն սահմանազատման անվան տակ Կիրանցի հողերը Ադրբեջանին հանձնելու պատճառով գյուղի արոտավայրերը նվազել են, որի հետեւանքով Կիրանցում պահվող խոշոր եղջերավոր անասունների թիվը 40 տոկոսով նվազել է: Մինչեւ սահմանազատումը Կիրանցում 38 հեկտար աշնանացան էր արվում, այժմ ցանված է շուրջ 10 հեկտար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԻՆՉ ՈՒՆԻ ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ArmLur.am-ը ուսումնասիրել է Քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Դավիթ Գրիգորյանի 2024 թվականի տարեկան հայտարարագիրը:

Նշենք, որ Դավիթ Գրիգորյանը պաշտոնը ստանձնել է 2023 թվականի մարտի 17-ին:

Ըստ հայտարարագրի՝ տարվա սկզբում նա ունեցել է անշարժ գույք՝ Կոտայքի մարզի Քասախ համայնքում գտնվող անհատական բնակելի տուն՝ հողամասով եւ տնտեսական շինություններով, որը ձեռք է բերել 2021 թվականին:

Տրանսպորտային միջոցների մասով ArmLur.am-ը պարզեց, որ պաշտոնյան 2024 թվականին ձեռք է բերել Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենա՝ 17,5 մլն դրամով: Բացի այդ, նրա անունով հաշվառված է նաեւ 2012 թվականի արտադրության BMW ավտոմեքենա:

Հայտարարագրում նշված է նաեւ, որ Գրիգորյանը տարվա վերջում ունեցել է տրված փոխառություն՝ շուրջ 20.4 մլն դրամի չափով:

Բանկային միջոցների մասով ArmLur.am-ը հաշվարկեց, որ տարվա սկզբում նրա հաշվեհամարներում առկա գումարները կազմել են ընդհանուր շուրջ 1,888,627 դրամ, իսկ տարվա վերջում՝ տարբեր արժույթներով պահվող գումարների դրամային համարժեքը կազմում է 628,388 դրամ, ինչպես նաեւ՝ 1,035 եվրո: Բացի այդ, նա հայտարարագրել է 19 մլն դրամ կանխիկ միջոց:

Պաշտոնյայի եկամուտները կազմել են ընդհանուր 12,649,429 դրամ, որոնք ստացվել են մի քանի աղբյուրներից՝

- ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտից՝ 1,284,605 դրամ,
- Քաղաքաշինության կոմիտեից՝10,846,280 դրամ,
- Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանից՝ 518,544 դրամ:

Միաժամանակ ArmLur.am-ը պարզեց, որ պաշտոնյան ունի նաեւ վարկային պարտավորություններ.

- փոխառության մնացորդ՝ 67,980,000 դրամ,
- հիփոթեքային վարկ՝14,581,191 դրամ,
- եւս մեկ վարկ՝9,214,814 դրամ:

Ընդհանուր վարկային բեռը կազմում է 23,796,005 դրամ:

Գործարար գործունեության մասով Գրիգորյանը հանդիսանում է «Առնի» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր, սակայն այն փոխանցված է հավատարմագրային կառավարման կնոջը՝ Անուշ Գրիգորյանին (պայմանագիրը գործում է մինչեւ 2026 թվականը): Նա նաեւ հանդիսանում է «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի խորհրդի նախագահ՝ որպես պետության ներկայացուցիչ:

Բացի այդ, ArmLur.am-ը պարզեց, որ նա անդամակցում է Շինարարների միությանը՝ որպես խորհրդի անդամ:

Կնոջ՝ Անուշ Գրիգորյանի հայտարարագիրը

ArmLur.am-ը ուսումնասիրել է նաեւ կնոջ ունեցվածքը: Անուշ Գրիգորյանը հայտարարագրել է 2017 թվականի արտադրության Mercedes-Benz ավտոմեքենա, որը ձեռք է բերել 2023 թվականին՝ 7 մլն դրամով: Նրա բանկային հաշիվներում առկա միջոցները կազմել են ընդհանուր 309,506 դրամ, իսկ կանխիկ դրամը՝ 5,5 մլն դրամ: Աշխատանքային եկամուտները կազմել են 1,800,000 դրամ, որոնք ստացել է «ԳԵՈԷՔՍՊԵՐՏ» եւ «ԱՌՆԻ» ընկերություններից:

Միաժամանակ նրա վարկային պարտավորությունը տարվա վերջի դրությամբ կազմել է 8,205,000 դրամ:

ArmLur.am-ը, ամփոփելով տվյալները, արձանագրում է, որ պաշտոնյայի ընտանիքը հայտարարագրել է զգալի դրամական միջոցներ, անշարժ եւ շարժական գույք, ինչպես նաեւ բավականին մեծ վարկային պարտավորություններ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐՎԵԼ Է

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը ընդունել է Եվրոպական միության դիտորդական առաքելության նորանշանակ ղեկավար Սատու Կոյվուին:

Նախագահը շնորհավորել է տիկին Կոյվուին պատասխանատու պաշտոնը ստանձնելու կապակցությամբ եւ մաղթել արդյունավետ աշխատանք՝ընդգծելով, որ առաքելության գործունեությունը կարեւոր նշանակություն ունի Հայաստանի սահմանամերձ շրջաններում կայունության եւ անվտանգության ապահովման գործում: Նա նշել է, որ վերջին չորս տարիների ընթացքում իրականացված աշխատանքը զգալի ներդրում է ունեցել լարվածության նվազեցման եւ խաղաղ միջավայրի ձեւավորման ուղղությամբ: Նախագահը նաեւ պատրաստակամություն է հայտնել իր աջակցությունը ցուցաբերել առաքելությանը՝ դրա արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով:

Սատու Կոյվուն շնորհակալություն է հայտնել ընդունելության եւ վստահության համար՝ նշելով, որ մեծ պատիվ է ստանձնել այս առաքելության ղեկավարումը նման կարեւոր ժամանակահատվածում: Նա ընդգծել է, որ շարունակելու է գործադրել բոլոր ջանքերը՝ առաքելության արդյունավետությունն ապահովելու եւ տարածաշրջանում խաղաղության ամրապնդմանը նպաստելու համար:

Հանդիպման ընթացքում կողմերը կարեւորել են Եվրոպական միության դիտորդական առաքելության դերը Հայաստանի համար բարդ ժամանակաշրջանում՝ տարածաշրջանում խաղաղության հաստատման ուղղությամբ իրականացվող քայլերի համատեքստում: Նշվել է նաեւ, որ առաքելության գործունեությունը կարեւոր է Հայաստանի քաղաքացիների համար, որոնք բարձր են գնահատում դրա դերը սահմանամերձ բնակավայրերում անվտանգության եւ կայունության ապահովման գործում: Կարեւորվել է նաեւ արդեն ընթացող խաղաղության գործընթացը հաջողությամբ ավարտին հասցնելու անհրաժեշտությունը:

● *Անցած 1 օրում գրանցվել է 10 ավտովթար. 12 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ

Ապրիլի 1-ին ՀՀ ԱԳ նախարարությունում տեղի է ունեցել 2026 թ. հոկտեմբերի 19-ից 30-ը Երեւանում կայանալիք ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովին ընդառաջ իրականացվող աշխատանքներին նվիրված հանդիպում, որին մասնակցել են Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Բացման խոսքով հանդես են եկել ՀՀ շրջակա միջավայրի նախարար եւ COP17 համաժողովի նախագահ Համբարձում Մաթեւոսյանը եւ ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Ռոբերտ Աբիսողոմոնյանը: Ներկաների ուշադրությանը են ներկայացվել համաժողովին ընդառաջ գործադրվող ջանքերն ու իրականացվող աշխատանքները եւ Հայաստանի նախագահության առաջնահերթությունները: ԱԳ նախարարի տեղակալ Ռոբերտ Աբիսողոմոնյանը ներկայացրել է COP17-ի շրջանակներում հոկտեմբերի 16-ին կազմակերպվելիք Առաջնորդների գագաթնաժողովի մանրամասները՝ ցնդգծելով կենսաբազմազանության հարցերը գլոբալ օրակարգում խթանելու գործում ամենաբարձր մակարդակով քաղաքական ներգրավվածության կարեւորությունը:

ՅՈՒՆԻԲԱՆԿ

20.04.2026թ.-ից Յունիբանկի «Ապարան» մասնաճյուղը կդադարեցնի իր գործունեությունը:

«Հարգելի հաճախորդներ, տեղեկացնում ենք, որ 2026թ. ապրիլի 20-ից Յունիբանկի «Ապարան» մասնաճյուղը /հասցեն՝ Ապարան, Բաղրամյան 24/ կդադարեցնի իր գործունեությունը:

«Ապարան« մասնաճյուղի ակտիվները եւ պարտավորությունները կփոխանցվեն «Աշտարակ» մասնաճյուղին /հասցեն՝ Աշտարակ, Ն.Աշտարակեցու հրապարակ 1/:

Յունիբանկի մասնաճյուղերի հասցեներին եւ աշխատաժամերին կարող եք ծանոթանալ՝ այցելելով www.unibank.am կայքը»:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Տեղեկատու հեռ.՝ (+37410) 71 22 22, (+37410) 59 55 55: *(Գ)*

Հայտարարություն

2026թ.-ի ապրիլի 30-ին՝ ժամը 11:00-ին, «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի գրասենյակում /հասցեն գ. ՋՈՎՈՒՆԻ 1փ. 142/ կկայանա «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով, որի օրակարգում ընդգրկված են հետեւյալ հարցերը.

1. ընկերության տարեկան հաշվետվության եւ հաշվապահական հաշվեկշռի հաստատում,
2. ընկերության շահույթի եւ վնասի հաստատում,
3. ընկերության շահույթի եւ վնասի բաշխման հաստատում,
4. վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրություն,
5. վերստուգիչ հանձնաժողովի եզրակացության հաստատում,
6. ընկերության աուդիտն իրականացնող անձի նշանակում եւ նրա ծառայությունների համար վարձատրության պայմանների հաստատում,
7. տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

ՖԱՍԹ ԲԱՆԿ

30 ՄԼՆ ԴՈԼԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Ֆասթ Բանկը միացել է «Firebird AI» ընկերության ֆինանսավորման նախագծին՝ տրամադրելով 30 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկավորում: ՀՀ պատմության մեջ առաջին անգամ 6 ֆինանսական կառույց միավորվել է մեկ մեգանախագծի շուրջ՝ 300 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում տրամադրելով արհեստական բանականության տվյալների մշակման կենտրոնի կառուցմանը:



Ֆասթ Բանկը միացել է «Firebird AI» ընկերության ֆինանսավորման նախագծին՝ տրամադրելով 30 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկավորում: ՀՀ պատմության մեջ առաջին անգամ 6 ֆինանսական կառույց միավորվել է մեկ մեգանախագծի շուրջ՝ 300 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում տրամադրելով արհեստական բանականության տվյալների մշակման կենտրոնի կառուցմանը:

Ֆասթ Բանկը, Արդշինբանկը, Ակբա բանկը, Էվոկաբանկը, Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիան եւ Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ ֆոնդն օրերս հանդիսավոր արարողությամբ գործակցության պայմանագիր են կնքել, հաստատելով, որ հայաստանյան ֆինանսական համակարգն ունի բավարար վստահություն եւ պրոֆեսիոնալիզմ համատեղ ուժերով խոշորածավալ ու ռազմավարական ծրագրեր սպասարկելու համար:

Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի, ինչպես նաեւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան գործերի ժամանակավոր հավատարմատարի գլխավորած պատվիրակությունները:

«Բանկի տեսակետից այս ներդրումը ոչ միայն բիզնես ներդրում է Բանկի զարգացման, Բանկի աճի տեսակետից, այլ նաեւ մեր համար կարեւոր ներդրում է Հայաստանում, Հայաստանի զարգացման ֆունդամենտալ փոփոխությունների եւ երկարաժամյա հեռանկարի համար: Մենք շատ ուրախ ենք եւ հպարտ ենք, որ Ֆասթ Բանկը մասնակցում է նմանատիպ սինդիկացված ֆինանսավորմանը»,-նշել է Ֆասթ Բանկի գործադիր տնօրեն Գարեգին Դարբինյանը:

Firebird-ի արհեստական բանականության գործարանը դառնալու է տարածաշրջանի ամենահզոր հաշվողական եւ տվյալների մշակման կենտրոնը՝ Հայաստանը դիրքավորելով որպես գլոբալ տեխնոլոգիական լանդշաֆտի զարգացող ուժ եւ հաջորդ սերնդի նորարարությունների կարեւոր հանգույց:

Ֆասթ Բանկի մասնակցությունն այս նախագծին արտացոլում է Բանկի հանձնառությունը՝ լինելու ժամանակակից ֆինանսական լուծումների կենտրոնում եւ իր նպաստը բերելու երկրի տնտեսության զարգացմանը:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԼՈՒՐԵՐ

ԿԱՍԵՑՎԵԼ Է

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի տեսուչները ստուգում են իրականացրել «Իգիթ» ՍՊԸ-ին (Շիրակ, գ. Ազատան) պատկանող կաթնամթերքի արտադրամասում, որի ընթացքում կատարել են «Մածուն 2.5%» ապրանքանատեսակի նմուշառում եւ հանձնել լաբորատոր հետազոտության. պարզվել է, որ արտադրվում է վտանգավոր սննդամթերք:

Ըստ փորձաքննության արդյունքների՝ «-Մածուն 2.5%» արտադրատեսակի նմուշը կաթնայուղի ճարպաթթվային կազմ՝ «-Կաթնային յուղի ճարպաթթուների մեթիլ եթերների հարաբերակցությունը՝ օլեինաթթու (C18:1) մերիստինաթթու (C14:0)», «-Կաթնային յուղի ճարպաթթուների մեթիլ եթերների հարաբերակցությունը՝ լինոլաթթու (C18:2) միրիստինաթթու (C14:0)», «-Կաթնային յուղի ճարպաթթուների մեթիլ եթերների հարաբերակցությունը՝ օլեինաթթվի եւ լինոլաթթվի գումար հարաբերությունը լաուրինաթթվի, միրիստինաթթվի, պալմիտինաթթվի եւ ստեարինաթթվի գումարին», ցուցանիշներով չեն համապատասխանել Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին:

ՍԱՏՄ ղեկավարի որոշմամբ՝ կաթնամթերքի արտադրամասի արտադրական գործունեության առանձին գործառույթը կասեցվել է:

Արտադրողին տրվել է խմբաքանակի իրացումն արգելելու, շուկայից հետ կանչելու, ոչնչացնելու կամ օգտահանելու մասին կարգադրագիր:

ՇԱՀԱՎԵՏ Է

Ռուսական եւ ղազախական բեռներ երկաթուղով Հայաստան ուղարկելը Ադրբեջանի եւ Վրաստանի միջոցով, օգտակար է բոլորի համար, ինչի մասին է վկայում բեռնափոխադրումների աճող թիվը: Այս մասին ՏԱՍՍ-ին տված հարցազրույցում հայտարարել է Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը:

«Ռուսական երկաթուղիների մասնագետները ընդամենը մի քանի օրվա ընթացքում համաձայնության եկան ռուսական եւ ղազախական բեռները Հայաստան տեղափոխելու վերաբերյալ՝ Ադրբեջանի եւ Վրաստանի միջոցով: Եւ երեսուն տարվա ընթացքում երկաթուղով Հայաստան ժամանածհացահատիկի առաջին խմբաքանակը ռուսական էր: Պարարտանյութերն այժմ սկսում են ժամանել, եւ բեռների տեսականին ընդլայնվում է»,-հայտարարելէ Օվերչուկը:

Նա համոզված է. «Սա շահավետ է բոլորի համար՝ Ռուսաստանի, Ադրբեջանի, Հայաստանի եւ Վրաստանի: Բոլորն ունեն եկամտի նոր աղբյուր, եւ Ռուսաստանը դրա հետ անմիջական կապ ունի»:

ՈՉ ՈՔ ՉԻ ՓՈԽԱՐԻՆԻ

Եվրոպական դիվանագիտության ղեկավար Կայա Կալասը խոստովանել է, որ ոչ ոք չի կարող փոխարինել Միացյալ Նահանգներին ՆԱՏՕ-ում, եթե Վաշինգտոնը դուրս գա դաշինքից: Ապրիլի 1-ին «Telegraph»-ին տված հարցազրույցում Թրամփը հայտարարել է, որ լրջորեն քննարկում է ԱՄՆ-ի ՆԱՏՕ- ից դուրս գալու հարցը՝ դաշինքի կողմից Իրանի դեմ գործողությանը օգնել հրաժարվելուց հետո: Նա ասել է, որ միշտ ՆԱՏՕ-ն համարել է «թղթե վագր» եւ նշել, որ Ռուսաստանը նույնպես գիտակցում է դա: «Իհարկե, ոչ ոք չի կարող փոխարինել ամերիկացիներին, քանի որ ՆԱՏՕ-ն կառուցված է դաշինքների վրա: Բայց մենք պետք է անենք ամեն ինչ, որպեսզի այս հարաբերությունները գործեն»,-ասել է նա ETV-ին տված հարցազրույցում:

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է

Կալիֆոռնիա կատարած այցի ընթացքում ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Նարեկ Մկրտչյանը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Ասպետների (AGBU Asbeds) հրավերով, հանդիպել է ՀԲԸՄ անդամների, այլ հրավիրյալների հետ՝ ներկայացնելու ՀՀ-ԱՄՆ օրակարգի առաջնահերթությունները, ընթացիկ աշխատանքները եւ առաջիկա անելիքները: Այս մասին հայտնում է դեսպանությունը: «Զրույցի առանցքում եղել են Վաշինգտոնյան համաձայնագրերը, «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» (TRIPP) նախաձեռնությունը եւ դրա շուրջ ստեղծվող նոր բազմոլորտ հնարավորությունները: Հանդիպումը շարունակվել է հարցուպատասխանի ձեւաչափով, որի ընթացքում դեսպան Մկրտչյանը պատասխանել է մասնակիցներին հետաքրքրող հարցերին՝ հայ-ամերիկյան օրակարգի եւ երկկողմ հարաբերությունների շուրջ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՓԱՍՏԵՐ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԵՐԿԱՐ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի են բոլոր հավականների անունները, որոնք նվաճել են Աշխարհի առաջնության ուղեգիր: Նրանք ամռանը դայֆարելու են չեմպիոնության համար:

Բացման խաղը

Հունիսի 11-ին Մեխիկոյի «Ացտեկա» ստադիոնում կտրվի առաջնության մեկնարկը: Բացման խաղում Մեքսիկայի հավաքականը հանդիպելու է Հարավային Աֆրիկային: Այդ գեղեցիկ ու պատմական ստադիոնում կայացել են նաեւ 1970 ու 1986 թվականների Աշխարհի առաջնության հանդիպումներ:

48 թիմ

Առաջին անգամն է, որ Աշխարհի առաջնությանը մասնակցելու է այսքան շատ թվով հավաքական: 32 թիմի փոխարեն լավագույնը ճանաչվելու համար պայքարելու է 48-ը: Երկրպագուներն ականատես են լինելու 104 հանդիպման:

Ընդունող 3 երկիր

2026-ի ԱԱ-ն կայանալու է ԱՄՆ-ում, Մեքսիկայում ու Կանադայում: Սա առաջին դեպքն է, երբ տղամարդկանց Աշխարհի գավաթն ընդունում է երեք երկիր: Խաղերի առյուծի բաժինն անցկացնելու է ԱՄՆ-ը, հանդիպումներ կընդունի ամերիկյան 16 քաղաք: Մեքսիկայում պայքար կծավալվի 3, իսկ Կանադայում՝ 2 քաղաքում:

12 խումբ

Կազմվել է 12 խումբ՝ չորսական թիմով: 1-2-րդ տեղերը գրավածներն անցնելու են հաջորդ փուլ, նրանց կմիանան նաեւ խմբերում 3-րդ տեղը զբաղեցրած 8 լավագույնները:

3 անգամ Մեքսիկայում

Մեքսիկան լինելու է առաջին երկիրը, որը երեք անգամ անցկացրել է Աշխարհի գավաթը: Նախկինում այն ընդունել է նաեւ 1970 ու 1986 թվականների ԱԱ-ն:

Եզրափակիչը՝ «MetLife»-ում

Աշխարհի առաջնության եզրափակիչն ընդունելու է Նյու Ջերսիի «MetLife» ստադիոնը, որը տեղավորում է 82,500 հանդիսական:

Նորամուտ ու բոյկոտ

Կաբո Վերդեն, Կյուրասաոն, Ուզբեկստանն ու Հորդանանը նորամուտն են նշելու Աշխարհի գավաթում: Իսկ ահա Իրանի մասնակցությունը դեռ հաստատված չէ: Պատերազմի պատճառով երկիրը հայտարարել է, որ իր թիմին չի ուղարկելու ԱՄՆ: Մինչդեռ ՖԻՖԱ-ի նախագահը հայտնել է, որ պատրաստվում են ապահովել իրանցի ֆուտբոլիստների անվտանգությունն ԱՄՆ-ում:

Աշխարհի ամենաերկար առաջնությունը

48 թիմ, 104 խաղ, ընդունող 16 քաղաք. 2026-ի Մունդիալը լինելու է ամենաերկարն ու մեծը մրցաշարի ողջ պատմության ընթացքում: Կազմակերպիչներն ակնկալում են, որ հանդիպումներին ընդունող երկրներում ու ողջ աշխարհում հետեւելու են միլիոնավոր երկրպագուներ:

100-ԱՄՅԱԿ

ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի Երիտասարդական էքսպերիմենտալ թատրոնում կայացել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ռեժիսոր, պրոֆեսոր Կիմ Արզումանյանի 100-ամյակին նվիրված «Գիշերային թմբուկներ» ներկայացումն ու հուշ-երեկոն: Այս մասին հայտնել են ՀՀ ԿԳՄՍՆ-ից:

Միջոցառմանը ներկա է եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը: Կարեւորելով նման նախաձեռնությունները՝ նախարարի տեղակալն ընդգծել է՝ անհրաժեշտ է լավագույնս արժեւորել մեծ արվեստագետների ժառանգությունը. «Վարպետն իր փորձն ու գիտելիքները փոխանցել է սերունդներին, որոնք այսօր էլ հաջողությամբ շարունակում են նրա գործը: Հենց այս դահլիճում են տարբեր տարիներին ծնվել ուսանողական այն ներկայացումները, որոնք ապացուցում են՝ արվեստի ճանապարհին դժվարությունները ու խնդիրներն անխուսափելի են, սակայն վարպետներից ուսանողներին փոխանցվող մասնագիտական հենքն ու ստեղծագործական եռանդը լուսավորում են այդ դժվարին ուղին»:

Ներկաներին ողջունել է ԵԹԿՊԻ-ի ռեկտոր Սառա Նալբանդյանը: Նա շեշտել է, որ Կիմ Արզումանյանի սաները թատերական աշխարհի ամենավառ անհատականություններից են, որոնք կրում են վարպետի ավանդած մասնագիտական ու մարդկային ազատությունը:

Հուշ-երեկոյի ընթացքում վաստակաշատ ռեժիսորի ուսանողները պատմել են հուշեր նրա հետ անցած ճանապարհի մասին: Ցուցադրվել են վավերագրական դրվագներ արվեստագետի կյանքից ու ստեղծագործական հարուստ կենսագրությունից, իսկ թատրոնի ճեմասրահում կայացել է արխիվային լուսանկարների ցուցադրություն: Կիմ Արզումանյանը բազմաթիվ բեմադրություններ է իրականացրել հայաստանյան թատրոններում, հեռուստատեսությունում ու ռադիոյում: Ռեժիսորական աշխատանքին զուգընթաց՝ նա բեղմնավոր գործունեություն է ծավալել նաեւ ԵԹԿՊԻ-ում՝ մինչեւ կյանքի վերջը ղեկավարելով բեմական խոսքի, շարժման եւ մեներգի ամբիոնը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ

Երեկ մեկնարկել են Հայաստանի ֆուտբոլի գավաթի քառորդ եզրափակիչ պատասխան հանդիպումները:

«Նոա»-«Փյունիկ» խաղում գրանցվել է 2:2 հաշիվը, սակայն երկու դիմակայությունների արդյունքով 4:3 հաշվով հաղթանակ տոնել են «Նոա»-ի ֆուտբոլիստներն ու անցել կիսաեզրափակիչ: Այս փուլում է նաեւ «Ուրարտու»-ն, որը երեկ 2:3 հաշվով պարտություն է կրել «Արարատ»-ից: Քանի որ «Ուրարտու»-ն առաջին դիմակայությունում երեք անպատասխան գնդակ էր ուղարկել մրցակցի դարպասը, շարունակում է պայքարը:

ԿԴԱՌՆԱ ԼԵԳԵՆԴ

Խառը մենամարտերի թեթեւ քաշային կարգում UFC դասակարգման երկրորդ համար Արման Ծառուկյանը (Հայաստան) խորհուրդ է տվել այս քաշային կարգում UFC չեմպիոն Իլիյա Տոպուրիային (Իսպանիա) փոխել քաշային կարգը եւ մենամարտել ռուսաստանցի Իսլամ Մախաչեւի հետ

«Տոպուրիան ճիշտ կաներ տեղափոխվեր կիսամիջին քաշային կարգ եւ մեծ գումար վաստակել: Եթե նա նույնիսկ պարտվի Իսլամ Մախաչեւին, մարդիկ կասեն, որ նա փորձեց պայքարել երրորդ չեմպիոնական գոտու համար:

Բայց եթե Տոպուրիան հաղթի Մախաչեւին, կդառնա MMA-ի լեգենդ՝ նվաճելով երեք գոտի: Եթե չստացվի, Տոպուրիան կարող է վերադառնալ թեթեւ քաշային կարգ, ես ես նրան կծեծեմ, իսկ հետո UFC ղեկավարությունը նրան դուրս կհրավիրի»,- ասել է Ծառուկյանը յութուբյան The Ariel Helwani Show-ի եթերում:

Ծառուկյանը MMA-ում տարել է 23 հաղթանակ, կրել երեք պարտություն:

ԿՊԱՐԳԵՎԱՏՐՎԻ 141 ՄԼՆ ԴՐԱՄՈՎ

Կայացել է ՀՀ կառավարությունն հերթական նիստը, որի ժամանակ որոշվել է Եվրոպայի առաջնության փլեյ-օֆֆ դուրս գալու համար ֆուտզալի հավաքականին հատկացնել 141 մլն դրամ:

«Հայաստանի ֆուտզալի ազգային հավաքականը Եվրոպայի առաջնությանը փայլուն մասնակցություն է ունեցել՝ դուրս գալով քառորդ եզրափակիչ: Անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի ֆուտզալի հավաքականի կազմում ընդգրկված մարզիկներին, մարզիչներին, բժիշկներին եւ վարչական անձնակազմի ներկայացուցիչներին դրամական պարգեւներ հատկացնել»,- գրված է հիմնավորման մեջ:

Հաշվի է առնվել, որ Հայաստանը թիմային մարզաձեւերի ԵԱ-ում առաջին անգամն էր հանդես գալիս ու գրանցել է հաղթանակներ:

Ռուբեն Նազարեթյանի թիմը խմբում հաղթել էր Ուկրաինայի ու Չեխիայի հավաքականներին, ոչ-ոքի խաղացել Լիտվայի հետ: Քառորդ փուլում այն պարտություն էր կրել Խորվաթիայից:

● *Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում ապրիլի 24-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Անուշ» օպերան:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ցանկանում եմ կատարել ջրամատակարարման եւ ջրահեռացման միացումներ: Ինչպե՞ս դա անել:

Սուրեն Սաֆարյան, 58 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ջրամատակարարման եւ ջրահեռացման ծառայությունները Հայաստանի Հանրապետությունում մատուցում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն, որին եւ պետք է դիմել նոր կառուցված բնակելի տան ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի միացման նպատակով: Նոր համակարգը, Ձեր հայեցողությամբ, կկառուցի վերոնշյալ ընկերությունը՝ Ձեր հաշվին, կամ կառուցման տեխնիկական պայմանները ստանալուց հետո՝ կարող եք կառուցել ինքներդ: Նոր համակարգը, բացառությամբ առեւտրային հաշվառքի սարքի ձեռքբերման եւ տեղադրման աշխատանքներից, կկառուցվի Ձեր հաշվին: Կառուցված ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգի նկատմամբ սեփականության իրավունքը եւս կփոխանցվի Ձեզ դրա կառուցման պահից:

Ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգի կառուցման եւ միացման նպատակով բնակիչ-բաժանորդները այդ մասին պետք է դիմում ներկայացնեն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին՝ ստանալու միացման տեխնիկական թույլտվություն եւ միացման նախագիծ:

Դիմումին պետք է կցվեն հետեւյալ փաստաթղթերը.

- անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ լիազորված անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը եւ լիազորագիրը,
- տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթի պատճենը կամ համայնքի, իսկ Երեւան քաղաքում՝ նաեւ վարչական շրջանի ղեկավարի կողմից տրված՝ տվյալ տարածքում (շենքում, շինությունում) բնակության փաստը հավաստող փաստաթուղթ,
- կառուցվող (կառուցված) օբյեկտի տեղադիրքը ցույց տվող սխեմատիկ հատակագծի կամ հաստատված գլխավոր հատակագծի պատճենը,
- տեխնիկական պայմանների եւ խոշորացված նախահաշվի կազմման համար 2000 դրամի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Հանրային ծառայությունների ոլորտ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վերոնշյալ փաստաթղթերը հավաքելուց հետո կարող եք դիմումը լրացնել տեղում՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի տարածքային ստորաբաժանումներում, եւ հանձնել նրանց: Ընկերությունից համակարգի կառուցման եւ միացման տեխնիկական թույլտվությունը եւ նախագիծը ստանալուց հետո կարող եք ձեռնամուխ լինել դրա կառուցմանը, իսկ համակարգի միացումից առաջ, այդ մասին զգուշացնելով ընկերությանը, կատարել միացում: Միացման ավարտից հետո պետք է տեղեկացնել այդ մասին ընկերությանը, որպեսզի աշխատակիցները գան եւ տեղադրեն առեւտրային հաշվառքի սարք, որից հետո էլ ընկերությունը Ձեզ հետ կկնքի ջրամատակարարման եւ ջրահեռացման պայմանագիր:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Տեղեկատվության տնօրինողը մերժել է տեղեկատվություն տրամադրել՝ պատճառաբանելով, որ դա նպատակահարմար չէ: Դա օրինակա՞ն է:

Աննա Արզումանյան, 31 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. (Սկիզբը՝ նախորդ համարում) Նամանատիպ դեպքերում կարող եք կրկին նույն տեղեկատվությունը պահանջելու հարցում ուղարկել այն տնօրինողին՝ նշելով, որ տրամադրված մերժումն անհիմն է եւ չի բխում օրենքից: Ձեր այս երկրորդ դիմումով կարող եք մանրամասն պարզաբանել, որ Ձեր հարցմանը ի պատասխան՝ անհիմն մերժում տրամադրելը խախտում է Ձեր իրավունքները, որ եթե երկրորդ անգամ եւս չտրամադրի այն, ապա կդիմեք դատարան Ձեր իրավունքների պաշտպանության նպատակով:

Սակայն եթե Դուք չեք ցանկանում երկրորդ անգամ դիմել եւ տեղեկատվությունը տնօրինողը պետական մարմին է, ապա Դուք կարող եք վերադասության կարգով ներկայացնել վարչական բողոք՝ պահանջելով պարտավորեցնել ստորադաս պետական մարմնին տրամադրել պահանջված տեղեկատվությունը: Այս դեպքում կհարուցվի համապատասխան վարչական վարույթ, որի արդյունքների մասին Դուք գրավոր կերպով կտեղեկացվեք: Վարչական բողոք ներկայանցնելու համար այն պետք է ձեւակերպեք գրավոր, որից հետո այն ուղարկեք վերադաս մարմնին:

Դուք նաեւ իրավունք ունեք դիմել դատարան ընդդեմ տեղեկատվության տնօրինողի՝ պահանջելով պարտավորեցնել նրան տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները: Այս դեպքում, ճիշտ է, դատական գործընթացները տեւելու են երկար, սակայն լինելու են առավել արդյունավետ միջոց:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ընդ որում, եթե տեղեկատվության տնօրինողը դատարան դիմելուց հետո կտրամադրի պահանջված տեղեկությունները, ապա Դուք նաեւ իրավունք կունենաք դատարանին խնդրելու՝ նրանից բռնագանձելու այն բոլոր դատական ծախսերը, որոնք կատարել եք դատարան դիմելու համար:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Ողբերգական ավտովթար Արմավիրի մարզում. բախվել են «Զիլ»-ն ու «Ford Transit»-ը. վերջինի վարորդը տեղում մահացել է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 1 + 4 + 8 + 13	
Կոտայքի լեռներ	+ 1 + 3 + 9 + 12	
Կոտայքի նախալեռներ	+ 3 + 6 +13 + 16	
Գեղարքունիք	0 + 4 + 8 + 12	
Լոռի	+ 3 + 7 + 16 + 19	
Տավուշ	+ 3 + 6 +16 + 19	
Արագածոտնի լեռներ	0 + 3 + 8 + 11	
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 7 +13 + 17	

Արարատ	+ 5 + 8 +15 + 18	
Արմավիր	+ 6 + 9 +17 + 20	
Վայոց ձորի լեռներ	+ 1 + 4 + 9 + 11	
Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 9 +16 + 20	
Սյունիքի լեռներ	0 + 3 + 8 + 12	
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 +14 + 19	
Սյունիքի հովիտներ	+ 8 + 12 +20 + 25	
Երեւան	+ 6 + 8 +17 +19	

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **02.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*